

Յղութեան տօները վերջին տարիներուն մէջ սկսած են։ Աստուածյայտութեան տօնին ալ առջի ատեններ կիրակիի փոխադրուելուն համար շատ զօրաւոր փաստեր կը պահուին եկեղեցական պաշտամանց պատշաճներէն և ծիսական կարգադրութիւններէն։ Միթէ նկատողութեան արժանի չէ, որ երբ ատեն մը հայեր գովելի բան մ'են կարծեր լատինական սովորութիւնները ընդօրինակել, այժմ լատինները օգտակար կդատեն հայկական սովորութեանց նմանողութիւնները ընդունել։

Հին կաթօլիկ — եկեղեցի.

Россія յուլիսի 20-ին, գրում է, որ յուլիսի 19-ին ն. տ. շվէյցարական հին-կաթօլիկ եկեղեցին տօնել է իւր առաջնորդի և հոգևոր ղեկավարի, ռուսացի ու դաստիարակի, Բերնի աստուածաբանական համալսարանի ֆակուլտետի պրօֆեսսոր դոկտոր Էդուարդ Գերցոգ եպիսկոպոսի ծննդեան 70-ամեակը։

Էդուարդ Գերցոգ եպիսկոպոսը շատ լուսաւոր, դիտնական, անսովոր առոյգ, շարժուն և դործունեայ մարդ է։

Շվէյցարիայի հին-կաթօլիկների եկեղեցու տօնակատարութեանը մասնակցել են Եւրոպայի և Ամերիկայի բոլոր միւս հին-կաթօլիկ եկեղեցիները։

Եկեղեցիների միութեան անխոնջ վաստակաւորին յղել են իրանց շնորհաւորութիւնը հին-կաթօլիկութեան Ռուսաստանի բարեկամներն էլ, մաղթելով ծերունազարդ յօբելեարին տեսնել իրականանալը իւր նուիրական հոգացողութեան։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսաստանի աւետարանական բաքսիսներին թոյլ է տրուած այս տարի սեպտեմբերի 25 — հոկտեմբերի 5-ը Մոսկվայում համառուսական աւետարանական բարտիստների ժողով գումարել։